


ՔԱՐՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 Յր
Տարեկան	6 "
Վեցամսեայ	15 "
Արտասահմանի համար տարեկան	8 "
Վեցամսեայ	3 սյր.
Անկերիկայի համար	1.50 "
Տարեկան	
Վեցամսեայ	

Մանուցումն տղր սուս զին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանկրիտ հ. երե անկերիկան համար 20 0/0 զեղյ կըլ լայ:

Վառանջի համար մոտի 10 սանկրիտ



R. P. Kalendarian, Mechitaristengasse, Vienne (Austria) W. 4.

Համակ եւ որսւմ որկեյ ինքնուրոյնիս հասարակ:

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjourn" Varna (Bulgarie)

Արտասահմանի համար մոտի 10 սանկրիտ

Վառանջի համար մոտի 10 սանկրիտ

ՄԱՐԿԻՆ ԱԶԳԱՐԻՆ. ԲԱՆՎԱՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՍՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՔԻ ՕՐԵՐԸ

ՇԱՐՔԻՆ Ի ԲԱՎԱՐԱՐԻ ԳՐՈՒՆԳԸ ԲԱՎԱՐԱՐԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԿԻ ՎՃԱՐԻ

ՀՆՉԱԿԻ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Բառական փրօւն «Ֆրազներով» ու գիտական ծանր «տերմիններով» (երբեմն նոյնիսկ տեղին չը գործածուած), Հնչակը իր յուրիս թուին մէջ «նոր մեթոդ» խորագիր նախադրուածով ինքնաքննադատութիւն մըն է գրերս Երեւոյթը ինքնատիւ քեան միւլթարական է, և, եթէ կուզէք նոյնիսկ «ասպետական» Բայց նախ արձանագրենք այն թէ՛ այդ «նոր մեթոդը» քանի մը անգամ կարգաւոր գտանք «հին մեթոդի» — այսինքն ասպետական շարժումներ առաջ բերելու եղանակի — քանզումն ու շնչումը, ինչ որ «կոլեկտիւային» (պարզագաման) մը պատճառով, սակայն կը ցաւինք ըսել թէ՛ «նոր մեթոդի» ինչ տեսակ բան լինելը չը կըրցանք հասկնալ, գիտական, փիլիսոփայական և յեղափոխական այդ նախադրուածը մինչեւ վերջին տառը անգլիօրէն մեզ մերձեց լուսկիի պզտիկ շող մը չը նորհել այն ճարտական պայծառ արեւին տեղ, որ «նոր մեթոդի» սարբու ետին է ծնուեր... Լօնտոնի մէջ 0 Այդ նախադրուածով ամէն մէկ յեղափոխական փոքրիկ քայլ յայնչանք կը համարուի, իսկ թէ ո՞ր քայլերը յանցանք չեն, այլ վարձք, ատոր կը պատասխանուի թէ՛ «նոր մեթոդը» իսկ թէ ի՞նչ է այդ «նոր մեթոդը», բայց, ներքեցէք, այդ մեր գործը չէ՛, այդ արդէն Լօնտոնի հնչակեան խորհրդարանի պաղտնիքն է, և այս բոլորէն յետոյ, թող ներուի մեզ ըսել թէ՛ այդ նախադրուածը մեզ յիշեցուց աղուէսի և խաղողի առակը:

Իստանբուլ ինքնաքննադատութեանը թէպէտեւ պարզ կերպով ինքնաքննադատութիւնը զուտ հնչակեան կուսակցութեան և անոր հարազատ ու խորդ ճիւղերուն վրայ միայն կը ծանրանայ, սակայն կը կարծենք թէ՛

հայեացքի սխալ մըն է սպրտեր (բան մը որ յաճախ կը պատահի պանապան «տերմիններով» ու ճոճան ֆրազներով ծանրաբեւեւուած յօդուածներու մէջ) այն կէտի վերաբերմամբ, երբ «շնչակ»ը հայ ազգը իբր «ոչխար» կը ներկայացնէ 0 Ահա իր խօսքերը — «Չուր տեղը չէ, յիրաւի, որ Զէյթունի ասպետութիւնից ի վեր, երբ Սուլթանը ստիպուեցաւ ստորագրել Մայիսեան բէֆօրմները, Եւրոպան այլեւս չը տեսնելով ասպետութեան մէկ այլ նշանակելի գործ, սկսաւ թիւրքահայերին նկատել իբրեւ «ոչխարներ ի հօս» 0 որը անկարող լինելով մինչեւ իսկ ինքնապաշտպանութեան գիմելու, հանդիսացաւ նրա աչքին անմեղ ողջակէզ» 0 Այս պարբերութիւնը սակայն բոլորովին հակասելով իրականութեանը, կը հակասէ անդառնալիօրէն նոյնիսկ իրեն «շնչակի» 0 քանի որ նախորդ թրուին մէջ արձանագրուած էր Ֆրանսական արտաքին գործերու նախարար պ. Տելիաստի յայտարարութիւնը թէ՛ — «ցաւալի է ըսել, Սուլթանը այնպիսի յոռի վարչութիւն մը կը պահէ, որով ասպետութիւնը կը գառնայ հայերու միակ միջոցը» — կը կարծենք թէ այս յայտարարութիւնը նախարարի մը կողմէ, մանաւանդ «պաշտօնապէս», շատ հեռու է հայերը «ոչխարներու հօս» անուանարկելէ 0 Ճիշտ է թէ «սօֆիստութիւնը», մանաւանդ տկարներուն մէջ, մարդ մը կամ նոյնիսկ հնչակեան կուսակցութեան բերան մը կրնայ մանկակտն մոռացումներու հասցնել, անշուշտ քիչ մը զաւելտ պատճառելու անմեղ դիտումով, սակայն այդ պիսի ժամանակ չը պէտք է գնել նոյն բերանի մէջ յայտարարութիւններ, որոնք բաց է ի բաց կը ջրծն յետագայ վճիռները:

Ակամայ սխալ մըն է անշուշտ, որ սպրտել է, յառաջիկային, մանաւանդ «նոր մեթոդի» շնորհիւ ատանկ «թուաֆ» հակասութիւններ չը պիտի ըլլան 0 Այս

սխալները շտկելէն յետոյ, այժմ դառնա՞նք ինքնաքննադատութեան «ասպետական» կողմին 0 Հնչակը կը գտնէ թէ՛ «հնչակեան կուսակցութիւնը ահա եօթ տարից ի վեր թիւրքահայ պատի նկատմամբ պաղել» մնացել է ինչ որ մէկ անոյ ոչ ու խաւարում խարխափող գիրքում, առանց մտաւոր կողմնացոյցի, առանց կրիտիկական քննութեան, առանց նոր տակտիկայի, նոր մեթոտի որոնման ջանքի...»

Ասկէ աւելի անաչառ ինքնաքննադատութիւն կուսակցութեան մը մասին անշուշտ չէ կարելի պահանջել 0 Այդ դառն և ցաւալի ինքնաքննադատմանը կը բուրն քայքայուի, եղբայրասպանութեան և անդարձ անհետացումի հօտերը 0 Կեղբոր կզգայ խորագէտ թէ՛ ալ կուսակցութիւնը անհնար է վերակազմել, և անոր իր նախկին փայլն ու շուքը տալ, ուստի ստիպուած է գտնել իր հոգեւարքի օրերուն մէջ վերակենդանացման գերագոյն ճիւղերուն հետ 0 Կորուած փառքին վրայ գառնապէս լալ և հայհոյել ինքզինքը, թուելով իր յանցանքները, Հայութիւնը այս մեռնող կուսակցութեան հանդէպ, անշուշտ ուրիշ զգացում մը չը կրնար ունենալ, հիմէ ոչ լսելով իր իսկ բերանէն իր յանցանքները, քրիստոնէաբար ներել անոր, և մահամեծին բերանը նշխարով մը կնքել 0

Հնչակը, ասպետականօրէն, իր ամբողջ կուսակցութիւնը գատապարտել է հայհոյելէ յետոյ, գատակնիք — գամբանական մըն ալ կը կարգայ իր հարազատ զակին (Վերածնութեան) ըրած մէկ գօնքի շտապութեան ու խաչագոյութեան առթիւ, որով և կը փակէ իր «նոր մեթոտ» նշանակալից նախադրուածը 0

Խնդիրը հետեւեալն է 0 Ինչպէս յայտնի է ամիսներէ ի վեր, սկսած Անդրանիկի կռիւներէն, «Իրօշակ»ի մէջ կը տպուէին կրուի վայրէն հասնող զեկուցազրեր, պարզ, համեստ, և երբեմն

նոյնիսկ լակոնական բովանդակութեամբ, և, չը մոռնանք ըսել թէ՛ Հնչակը կը գատապարտեր Վերածնութիւնը սակայն հնչակեան 14 հոգուց բաղկացած խումբի մը գէպի Պայազլիտի շրջանը կատարած արշաւանքի մասին մասնաւոր թուցիկ կը հանէ, երկար շատ երկար թղթակցութիւն մը շիֆ շիտակ Իւլ Գիլիսէի Ս. Յովհաննու վանքէն, հնչակեան զինուորական խորհուրդէն ուղղակի կերպով Ռուսչուք հասած ըլլալով 0 Նայելով «Վերածնութեան» այդ թուցիկին, երջանիկ կզգանք մենք մեզ, տեսնելով որ մեր հնչակեան այդ ճարտանցիներէն ալ աւելի քաջ ու վճռական զինուորական խորհուրդը (երեւի նոյնպէս բանակը) հայրենիքի ցաւով ու երազով վառուող բանաստեղծներ (հայկական առումով) են 0

Թուցիկը, որ ըստ երեւոյթին արշաւանքի կամ կանոնաւոր պատերազմի, ինչպէս որ կուզէք, զեկուցագիր մըն է, և որ բաղկացած է 8 ամբողջական սիւնակներէ, ընդհարումներու մասին միայն իր վերջին մէկ ու կէս սիւնակներու մէջ է որ կը խօսուի, այն ալ շարունակ բանաստեղծական (միշտ հայկական առումով) դարձուած քննարկ համեմուած — օրինակ — «սքանչելի» տեսարան, գեղեցիկ բնութիւն, զմայլելի առաւօտ...» և կամ — «Արշալոյսը գեւ նոր է բացուել, առաւօտուայ զով ու առողջարար օգը օրով մը էր մեզմ կերպով, խոտերի ու երփներանգ ծաղիկներ զրայ նստել էր ցօղը...» 0 Որպէս զի ընթերցողը վտարկեան մը չը կարծէ թէ՛ ասոնք սարբը պտտող բնութեան սիրահար ճամբորդներ են, ըսենք որ, այս Արծիւ խումբն է, և որ անոր զինուորական խորհուրդը այս զեկուցագիրը կը գրէ Իւլ Գիլիսէի Ս. Յովհաննու վանքին մէջ, որ այլեւս ազատ Հայաստանի հող է, և մինչդեռ հնչակեան բանակը անդին «եօթը թնդանթններ կը խըլէ», տեղ մը «հարիւրաւոր» և ու

րիչ տեղ մըն ալ հարգարժեքը
թիւրք ու քուրդ աշխրէթներգե-
տին կը փռէ՞։ Գեռ այս ոչինչ
— Կառուի միջոցին զինուորներէն
կ'ըստանունին 60 հոգի, որից
յետոյ միթերանցի զէնքերը կը
գրաւունին... Ալ զնդակ կուզէք,
ուսմը կուզէք, անձրեւի պէս կը
տնկան թշնամու գլխուն հնչակ-
եան կուռ բազուկներէն և հա-
զարաւոր մարդիկ, և շատ չէյ-
տեք գետին կը տապալին...

Բայց անտէք թէ՛ հիմա ինչ
կ'ըսէ ալզ առթիւ Հնչակը ինքը՝
— «Կեր ինքնազոհ բաւակնու-
թիւնը փոքրիկ գործերով, որ
գրուած են շատ խոշոր առաւելով
և փառաբանում աւելի էլ խոշոր
խօսքերով, գատարկ կարասի աղ-
մուկին է նման, և մեր ինքնա-
խաբէութեան տխուր միթմանը
(օգային երեւոյթներ) են՝ յան-
ցա՞նք—» :

Այսքան ալ բաւական է :
Մարդկային անաշտութիւնը
անշուշտ չը կրնար Յիսուսի մը
անաշտութեան հաստատուիլ :
Ասոր համար է, որ մենք ալ շատ
պահանջկոտ չը պիտի ըլլայինք,
տեսնելու Հնչակը, որ առանց ա-
սոր ալ արդէն հոգեւորքի ցա-
ւերը կապրի, անաշտութեան
ծայրագոյն գագաթին վրայ կե-
ցած, աճող ճշմարտութիւնը
յայտներ հայ ազգին, «Կերածը-
նութեան» ըրած խոշտոգողու-
թեան առթիւ, թէ՛ — «այդ թը-
նուցիկը» խաչագողական հակայ
մի ծրարքն վիճմունքն է, և
թէ թղթակցութիւնը արդէն ինք
նին զուրկ լինելով պատերազմա-
կան հոգեբանութիւնից, ցոյց է
տալիս թէ՛ նա շարագրուած է...
հէնց Ռուստուզի մէջը — և յե-
տոյ կատարեալ ասպետական ըլ-
լալու համար, օրինակ յայտա-
բարեր է թէ՛ — «Կերածնու-
թեան» այդ թաւալիկը մեր ող-
բացեալ կուսակցութեան կ'են տե-
րուն անց ու մի հրաշալի պտուղն
է...»

Սակայն լաւ է հերոս ըլլալը,
բայց և հերոս չըլլալը մարդկա-
յին է : Սամնայն զէյս կը կար-
ծենք թէ՛՝ «ամբողջ հայ ազգը
գոհ պիտի ըլլայ «Հնչակի» այդ
ասպետական ինքնաքննադատու-
թենէն :

ՍՈՍՈՒՆԻ ԿՈՒՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ
—(00)—
Ը.

Թուրքը և Սասունցին 1900-1901ին

Սասունցին աւ թուականներուն
ընդվզումի առաջին սրտապնդող օր-
նակները կուգայ տալ ինքնաբերաբար,
Հեթ ինկցիներու ընդդիմութեան օ-
րինակէն ետքը :

Մէկ կողմէ անտանելի ճնշումներն
ու սպաննութիւնները — որոնց ամփո-
փուր տեսանք — միւս կողմէ հարօնի
Ասիւժ Աղբիւր-Սերոբի կազմուրիչ

կենդանութիւնն ու ողբայի և վրէժ-
խնդիր մահը՝ սասունցին մէջ ար-
թնցած ընդվզումի զգացումներուն
պոռթկալուն ուղղակի պատճառ եղան :
Եւ ասի, նորէն առանց դրսէն գը-
նացող կամ հրահանգող յեղափոխա-
կաններու — գաշնակցական վարչնե-
րու՝ ինչպէս կը ճգնին շարամտօրէն
մտքերը նախապաշարել... վերակազմ-
եալ ազգագրութեամբ — գրգռուէն, ա-
ռանց նոյնիսկ զէնքի սաղմութեամբ
պաշար ունենալուն :

Աս կը նշանակէ թէ՛ սասունցին
մահը աչքը առեր է արդէն և բնա-
պէտք չունի գրսի ազգասպան ար-
ցունքներուն :

Մէջ ընդմէջ ընդվզումի կենդանի
փաստը նկարագրող նամակը :

Անտուանալի Սերոբի մահու անէն
շարաթ մը վերջ՝ քիւրդեր առթիւ գտ-
նելով գնացին զէնքի Սասունը հայ
գիւղեր ժամանակէ մը ի վեր զգան-
ձուած հարկերը գանձելու : Անոնցից
սասունցի Պշարի (քիւրդ աղա) աղա Մա-
լի 200 հոգիով կուգայ Գաւուրիկի
Սպրդան գիւղին վրայ, ուր կը գըտ-
նուի Սերոբի կնքանայր Մակարը :
Քաջարի զինուորը կը հաւաքէ գիւղի
մէջի զինեալ երիտասարդները և կը-
սէ. տղայք, աճաւասիկ Մալի ա-
ղան Աղբիւրի գլուխը կերաւ և հիմա
այ այսպիսի մարդով եկեր և զէնքի
գիւղը կը յառաջանայ իր ուզածը ա-
նելու : Ալ ինչո՞ւ կ'ապրինք, մենք
Աղբիւրից աւելի չենք... Այս խօս-
քերէն ետք խկոյն տասը զինեալով
գիւղից կ'ենէն և հանդիպելով թշնա-
մուն, հրաման կ'ընէ կրակ ընելու :
Իսկոյն Մալի ի մարդկանցից, որոնք
պատճառ եղած էին Աղբիւրի մահուան,
և հոգի գնդակի զոհ կ'երթան և 6
հոգի ալ կը վերաւորուն : Մնացեալ
բազմութիւնը, մաս 190 հոգի, իրենց
փոքրիկ կորուստը տեսնելով կը ձը-
գեն կը փախնին : Հայերի կողմից զոհ
եղան միայն երկու հոգի՝ Չալար և
Պաղոս քաջ երիտասարդները : Կուրբ
խկոյն կառավարութեան ականջը կը
հասնի և քիչ ժամանակէն զօրք կու-
զարկուի հայերի դէմ : Զօրքերը մէկ
կողմ և հայերը միւս կողմ կեցեր կը
սպասէին... Զօրքին հրաման չի կար
զարնելու :

Միաժամանակ թուրք կառավարու-
թիւնը ոստիկաններ կուղարկէ Դաւ-
ւորիկ և սէր Գաբրիէլ քահանան և
մի քանի ազգեցիկ հայեր ձերբակալե-
լով՝ Մուշ կը բերեն կը բանտարկեն
իւր խոզվարներն :

Ասկէ ետքն է որ կը կոտորուի ըՍ-
պաղանքը :

Ո՞վ է հիմա այն անձը որ կ'ուզէ
խել կամ արդիւի Սասունցին իր ի-
րաւունքը պաշտպանելուն մէջ, փո-
խանակ ոչխարի պէս մտնելու, կոխ-
ւով, զիւցազնօրէն մեռնելու վտեմ
ձգտումը :

Հոս Սասունցին մեզի կը ներկայա-
նայ իր արի, պատուասէր և վրէժ-
խնդիր նկարագրով : Եւ երբ մարդիկ
պաշտելի՝ մարդիկ, իրենք յանձն կառ-
նեն պատուով մեռնիլ, որոնք բնա-
կանաբար իրենց կեանքին արժէքը
մեզնէ հարաւ անգամ լաւ գիտեն, ինչ
վատ դեր է որ կուզան կատարել վե-
րակազմեալ ազգասպաններ Սասուն-
ցին զիւցազնութիւնները իբրև
ձեռնապար գործեր ուրիշներուն,
զէնք տուղներուն և վարչներուն
վզին փաթթել աշխատելու իրենց զըզ-
ուելի շարամտութիւնովը :

Եւ աս միակ օրինակը չէ, ուր սա-
սունցին դուրս կուգայ իր խիղիս,
ազգային պատիւի նախանձախնդիր և

վրէժխնդիր ու կուռղ-զուռող յատ-
կութիւններովը :

1901 թուականը աւելի անակնկալ
նկր կը բերէ մեզի :
Թուրք կառավարութիւնը կուզէ
միանգամ ընդ միշտ զօրանոցներու
խնդիրը կարգադրել և Սասունցին
չզթախի մէջ առնել :

Եւ աս անգամ Սասունցին մէջ կը
նշմարեն ՈՒՄ, պղտիկ խումբերով
չեն դիտեր Սասուն, այլ հազարներով
Ու Սասունի վրէժակը աւ թուականին
կ'ախտաբան կ'ընկնի դառնալ :

1901 օգոստոս 21-ին փոքր-Արմէ-
նիայի և Գորախի խմբագրութիւն
ները կ'ըստանան հետեւեալ հետագիրը .

«Մուշի շրջակայքում նոր անգլիսե-
թիւններ տեղի ունեցան : Աւսպակ
խմբեր համախմբներու և կանոնաւոր
զօրքերու անկապութեամբ թալանած
և սպաննուած են յուլիսի 3-ից սկսած :
Ոչնչացրած են Մասնիկ, Գուր-Վու,
Իկար («) Եկիւր, Միւնալու եւնի
Բնակիչները փախչում են լեռները :
Վանից և Բիթլիկից եկած քիւրդերը և
զօրքերը գրաւում են Սասունի բաբ-
ձրութիւնները և ուզում են լուծի չի-
նել տալ զօրանոցներ Գաւուրիկում,
Գէլիէ-գուզանում և Եկիլիում, Ժո-
զովուրդ սարսփաւոր, մերժում է
և իր հայրենիքից հեռանալու համար
խնդրում է հեռակատանների պաշտպա-
նութիւնը Սո («) և Դաւուրիկը ա-
ւելրած են, բնակիչները ապաստանել
են լեռները : Միւնալի աշխրէթը գրա-
ւել է Դաւուրիկը» :

Նոյն թուականներուն Մուշէն հա-
սած ընդարձակ նամակ մը — գրուած
յուլիս 4-ին — հետագրին մէկ-երկու
կէտերը կը պարզէ և գրութիւնը այս-
պէս կը նկարագրէ —

«Իսպաի կուսակալն ու Ալայի պէյր
Բ. Դրան հրահանգներով դեռ սեղս,
Մուշ են, երբեմն Սասունը և երբեմն
դաշտի վրայ կը դարձնեն իրենց ու-
նազրութիւնը և հարստանութիւն
ները : Ասանունի բոլոր լեռներուն վը-
րայ քիւրդ աշխրէթներ իրենց վրան
ները հաստատած են : Վանէն, Բաղէ
չեն զօրքեր եկան : Սասունցիները ի-
րենց զիրքերն իրեցնելու ծրարի-
մը համաձայն, 500-է աւելի կանոնա-
ւոր զօրքով վարպետներ զրկուեցան
Սասուն՝ որոշեալ երեք կէտերու վը-
րայ (Եկիլի, Գէլիէ-գուզան և Դաւու-
րիկ) զօրանոցներ շինելու համար :

Սասունցին նկատելով որ կառավար-
ութիւնը հոտ մուտ գործելով ան
ձայն ու անձու գիրներ խեղդելու և
ուշիկ-ուշիկ ջնջելու նպատակ ունի,
վերջապէս որոշեց միանգամից կոտոր-
ուիլ, սրէ անցնիլ և շիթոնել որ այդ
ծրագիրը իրականանայ : Հանրագիր
մը կնքելով, կանանց միջոցով խրկե-
ցին Մուշ, կուսակալին, գրելով որ —
«Եթէ կուզէք մեզ մեր հողին վրայէն
գաղթեցնել, բերել տուէ՛ք մեզի մի
քանի տասը հիւպատոսներ, որոնց
հովանաւորութեան ներքեւ հեռա-
նանք ձեր հողէն : Իսկ եթէ կը ցան
կար զօրանոցներ շինել և մեզ թող-
նել մեր տեղույ վրայ, չենք կրնար
ընդունիլ, որովհետեւ մեր աշխատող
ձեռքերը մեր կանայք ու աղջիկներ
լինելով՝ գըշեր ու ցորեկ գուրան են,
կանպատէին զօրաց կողմէ, և չենք
կրնար տանիլ : Վերջապէս այդպիսի
ձեռնարկ մը սկսուելուն պէս կը կը
տորուինք կին ու երախայով մը
ամայնան մեր քակալայիբր, այն
ատեն ինչ կուզէք, զայն ըրէք» :

Կառավարութիւնը կ'ործես կասե-
ցաւ այդ պատասխանի առջեւ : Բայց
անձ շատ չանցնիլ, զօրքերի հետ մի-

ասին վարպետներ կը զրկուին Սա-
սուն՝ յիշեալ զօրանոցներու շինու-
թիւնը սկսելու : Սասունցի կանայք
յարձակելով՝ կը շարսեն մկրէ վար-
պետներուն գործիքները և կ'ըսպա-
նան : Վարպետները կը փախնին ու
Մուշ կը վերագտնան :

Խիանցի աշխրէթի ցեղապետ Գէո-
Սըլուն մտնելով Տաւրիկ կառավար-
ական զօրքերով և աշխրէթի մար-
դիկներով, 100 սակի տուրք կաննէ և
եւ կը դառնայ, Երկրորդ անգամ
Փասուրի (փուր) գոյմագամին հետ
կը վերագտնայ : — Այս անգամ հա-
րիւր տարուայ տուրք պահանջելու և
կամ ենք, կամ պիտի վճարէք, կը
պիտի գողթէք կ'ըսէ : Տաւրիկից
չափելով ու կռելով իր ուժը կը
վճառէ լեռները քաշուիլ : Գրութիւնը
աւտովոր է. Սասունին մեծ վտանգ
կ'ըստանայ... »

Աս նամակին միջ պատկերացած է
Սասունցիին ամբողջ գիւցապական
օգին, քաղութիւնը... Չեմ ուզըր
առ տպագրութեան վրայ օ և է բան
աւելցնել այս անգամ, խորհրդածու-
թիւններն ու զէնքերու ամփոփում
ները յաճորդով :

Իսկ դուք մէկէ աւելի անգամներ
կարգապէս ու հիացէ՛ք, կարգապէս
ու որոնացէք.

Ժիրայր
Յիւլիպէ

ԵԳԻՊՏԱԿԱՆ Ք

Դէղգիւր ԵՒ ԴԻՍԱՍՏՈՒՆԵՐՆԵՐ

Անցորդ — Գաւի որ ստիթը ներ-
կայացաւ Գահրիէն տեսնելու, խնդ-
րեմ զիս զպրոց առաջնորդեցէք :

Մենտոր — Ես ա սիրով :

Ա.—Վ... այս ինչ խայտառակ
զպրոցական չէնք է. փաշաներու և
պէյրերու անփոփան ախտներ սակեց
չատ աւելի յարմար եւ ողբապիկ են
այս զպրոց չէնք իրենց պատիւ
չը բերնը... :

Մ.—Վ... անպատուութիւնը զգա-
լով նոր չէնք մը ինչու մտադիր
են :

Ա.—Ներկիս կան չէնք որ այսպէս
խարխուլ ախտով մը կը նմանի, հա-
պա քարոյսական չէնք ինչպէս է :

Մ.—Հիմա կը քննէք :

Ա.—Այս ներքնայարկ սրածը ինչ
բանի կը ծառայէ :

Մ.—Մաներուն ճաշարանին ներ-
քին մասն է :

Ա.—Լաւ, բայց այստեղ զազատ-
գողի ինչ կընեն կոր այս երկու
տարբեր սեռէ պաշտօնեաները :

Մ.—Ձեր այդ հարցումը աւելորդ
կը գտնեմ. պարզ բան է, որ կը սի-
րարանին կոր :

—Ա.—Ասկայն այս երեւոյթը վար-
ժարանին երկսեռ ու սանտոցաց բար-
յականը չը դաշթակցեցնե՞ր... :

Մ.—Անշուշտ. արդէն հոգաբար-
ձութիւնը իւր պատանին բերմամբ
պարտականութիւն մը զգացած է
սոյն յարաբերութիւնները արգիւ-
լու, պատուիրելով անտեսին որ լուր
սայ իրեն եթէ երբէք կրկնուի սոյն
յարաբերութիւնները :

Ա.—Բայց այս կրկնութիւն մը չէ՞
Մ.—Այս կրկնութիւնը տարբեր է,
որովհետեւ քննութիւնները մտ ըլ-
լալուն, քննութեան կը պատրաստ-
ուին կոր, առանց կրկնութեան
լինչպէս կը պատրաստուին :

Ա.—Ինչ որ ալ ըլլայ, այս կար-
գի արարքները զպրոցին մէջ անբա-

բայականացնող հանգամանք մը ունին, այս բանին ինչպէս ծնողները կը համբերեն կար :

Մ.—Այդ բանին դուք ալ գործա-ցիր ես ալ գործանամ. երթանք, դասեր մտիկ ընենք, կասն :

Ա.—Այս ի՞նչ գաս է. այս ի՞նչ լիարժեք է, այս ակնապիշ դիտող-ները որո՞նք ենք :

Մ.—Այլ ի՞նչ երուս համար աստիճաններուն վերջնական գործնական դաս է, տարրական սրբելու կը վարժեցնեն կը, նստողները այստեղի աղ ունեն են :

Ա.—Լուսած բան չէ՞. 12-15 տարեկան աղջիկներուն դարձողի մէջ տարրական սրբել, սորոքեցնել սրունք-ներն միջուկ կէ մէջը բաց... եւ այն ալ է ինչ որ դեռ ներկայումս թեւաւոր... սըքերուս հաստատու չի գար կո՞ւմ :


Մ.—Նպատակն տարրական սրբելու վարժեցնել չէ. ուր այս սպիտակ սրունքները ազաներուն ցոյց տալով անոնց անմեղ հոգի մը պատճառով է... :

Ա.—Հեռանանք այս դժուրքն, ապա թէ ոչ հիմայ բարկութենէս կաթնածանր պիտի բլամ :

Յօդակարգ

ԻՄ ՊՍՏԱՆԱՆԸ

ՀԱՅ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ



Յարգելի պարոն խմբագիր «Շար-ժում» լրագրի :

Պ. Ա. Տէր Զաքարեան ձեր պատ-թերթին շէ յուրիս թիւին մէջ «Մի տխուր իրականութիւն եւս» խորագիր յօդուածով մը, մղուած պարտականութեան անգնադո ձայնէն, կը ջանայ զի ներկայացնել իբրեւ մի անկեան խորհրդայն, եւ Լոզանի հայ ձեռնարկին ալ երեւակայական եւ վնասակար :

Կը խնդրեմ որ, ի սէր ճշմարտութեան, ձեր պատ. թերթին մօտակայ համարներէն մէկուն մէջ համբը գնակը այս գրութիւնս, ու ընդունիք կանխաւ խորին շնորհակալիքս :

Յօդուածագիրը այնպէս մը կը կեղծէ, աւելի ազդեցութիւն ընելու համար անշուշտ, իբրեւ թէ ինքնոր ծանօթացած է իր ներկայացուցած դարկարկի այն խորհրդայն հետ, որ ամբողջ հայութիւնը մեծ վտանգի մը կտանջուողէ, ուրիշ ազատողի արտոգոր պիտի կրնայ տալ իրեն պարծանքով ասկէ վերջ, իբր թէ ինքնոր անգնակացած է իր յառաջ ընթաց արտական թիւներուն, այսինքն ժընձկու մարտն եւ սխալմտութեամբ հայ շրջանէ հետո մը նստած ըլլալուս, «Թան» եւ «Յի-կոստ» մէջ յայտարարութիւններ տուած ըլլալուս, որը փաստ է եղեր թէ երբէք մտադրութիւն ունեցած ըլլած հայ մտաւորները կրթութեան ներթուրելու, եւրոպայի մէջ տասը հարուստ աշակերտով հանգիստ ապրելու նպատակ ունեցած ըլլալուս. եւ ուրիշ այս տեսակ խնդիր ստասյոգ յիմարութիւններ :

Դիմակ : Պ. ալ Տէր Զաքարեան անցեալ հոկտեմբերէն ի վեր կատարելապէս ծանօթացած է անոնց, եւ հաստատապէս գիտէ թէ անոնք իր խնդրութիւններն պէս չեն ընու : Սր դարեւ սկիզբէն մինչեւ վերջերս արդարական բուռն շարժումներու համակարգ մը յայտնած է Լոզանի հայ ձեռնարկին, ինչ որ կատարու-

ցանեն թէ իր մասնաւորներու գրած նամակները եւ թէ ՎՄԻՊԻ զրկած ու գամբուղ նետուած գաղափարներէն խանգարուած շարժումները այդ պարոնին յատկանիւն է—գրութիւնները եւ տակաւին ուրիշներ : Ինք պիտի շարունակէ ի վեր թէ միշտ մեր նպատակը հայ ծնողներու, օգտակար ըլլալ է, գիտել թէ «Թան» Ծիկառօսի ինչպէս եւ վիճակական թերթներու մէջ երեւցած յայտարարութիւնները անուղղակի կերպով Պոլսոյ համար էին, գիտել թէ միեւնոյն ատեն ՎՄԻՊԻ եւ ուրիշ հայ թերթներու մէջ ալ յայտարարութիւններ տուած էին 1902ին, գիտել թէ տասը լիարժեք աշակերտի կրթացմէկ որը ու ձրիսարժ աշակերտ տնայնու գիտաւորութիւնը ունեցած է եւ ուրիշ միշտ մեր գարոցը, որ շահասիրական գործ մը չէ ու չկրնար ըլլալ, քանի որ պահանջուած թոշակը ցնորք մը կրնէ այդ տեսակ որ եւ է ձգտում, գերջապէս գիտել... բայց շարժար շարունակելու ու իր գիտցած ներք իրեն կրկնել :

Ենթադրելով յոյնիկ թէ իր յառաջ ընթացող եղիւթիւնները իբրեւ ցնէ իր ըսածին, այսինքն իր խնդրութիւններն պէս են. Լա՛ւ, անոնք մայրս երեքի, «Հայաթերթ» ուր «հայ աղջիկները կրթութիւն» խորագրով եւ հասարակ տեղիքներով լեցուց յօդուածը մը ունի մեր պարտականութեանը, եւ ուր յոյնիկ իսկ նոյն թերթին մէջ ու միայն մի քանի թիւ ատաջ եղած փոխադրու խորհուրդ ատուած յաւերժահարս հայ աղջիկը օչինովիկական ձգտումներով տողորուած կանուանէ, ի՞նչ է որ հայ հասարակութեան շահերու պաշտպանը սկսի իր կատարելիք գործողութեանը :

«Ուրեմն յոյս չը պէտք է զնել ներկայ կին սերունդին վրայ, որ իրան վիճակը կը լուսացնէ կապի թէ էնպէս : Վիճակը որ ակնկալու կարտ է բարեօրոյն եւ որը սեծ գեր ունի խաղալու հայ ցեղի ճակատագրի վրայ : «Ինչք աղջիկները կրթութեան խնդիրը յանձնում ենք ուրեմն Պ. Լալանտեանի լուրջ ուշադրութեանը : Յարգելի պարոնը արդէն հաստատած է այդպիսի համար մի շատ համակարգի կրթատուս, որը լաւ կերպով կատարելու համար չը պակսի իրան հարկաւոր եւ զած կատարող ու թիւն եւ ձեռնահասութիւն : Զի՞ կարելի արդեօք, որ պարոնը հաճի հիմքը գնել նաեւ աղջկանց կրթատուսի : Գեղեցիկ գործը կատարել է նա տղայոց պատմութիւնը, գեղեցիկագոյն գործն էլ կատարած պիտի լինի անուշտ աղջկանց կրթատուսովը : Ստորագրութիւն Ս. Տէր Զաքարեանց, Լոզան :

Եւ յայն 26ին երեւակայական կրթատան վրայ գրած յօդուածը կը վերջացնէ ասպէս :

«Եթէ նոյն իսկ կարելի լինէր իր հրապարակ հասնած ալա ամերիկեան ինկլամներով ուսուցիկ ծրագրիները գործադրութիւնը (որի մնաց հասպ ձեռնհասութիւնը), ես չը պիտի յանձնարարէի ոչ մի հայ ծնողքի իրեն որդին վատ ահանախ յայտնաւորուած թիւն, եթէ նա նպատակ ունի իր որդին կրթել հայկական եւ թէ ժամանակակից առողջ ոգով : Ստորագրութիւն. Ս. Տէր Զաքարեան, Լոզան :

Ահա՛ հայ հասարակութիւն, ահա՛ նուիրական շահերը պաշտպանող գա-

մէլունը, կի՛րճ հասարակութիւն : Մարտիան եւ յուլիսեան երկու Ա. Տէր Զաքարեաններն մէկը կը պոռայ միտին երեսին զու կամ լիբր խորհրդայն մը : Ես կամ գործիք մը ուրիշներու ձեռքը եւ կամ գործերու գանգիտակից վիճակի մէջ գտնուող եղիկի մը : Անցնելու խօսքը մնար ինձ Եթէ նոյնիսկ հրաշք ալ տեղի ունենար այն անձը, որուն յանձնելու մե՛ծ պատիւ կընէր նաեւ աղջկանց կրթութեան գործը, չէր կրնար այդքան կարճ ժամանակամիջոցի մէջ ըրողովին անխտանելի խաբարայ դառնալ : Մնայ որ այդ մէկ երկու ամիսներու մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները Լոզանի ձեռնարկին հօդուածէս նպատակաւ էին եւ ոչ աննպատակ, քանի որ անոր տեսչը կարող ու հնարաւոր այնիւ օրիորդի մը հետ ամուսնացած էր. եւ քանի որ պարոնը իր յատուկ չէնք ունեցած էր, իրողութիւններ որ գործին վրայ աւելի եւս վտանգեթիւն ներշնչելու բնութիւն ունին եւ ոչ թէ հրաշքով ամէն ինչ յեղաշրջելու :

Ա. Տէր Զաքարեանի համակրութիւնը մոյսին չը կատար. նա մեր արժանութեան առթիւ շնորհաբարական հեռագիր ուղղած է մեզ, ու տակաւին յաւանական վերջն ալ իր դիմակաւորի ծամածուռութիւնը շարունակած միջեւ—ահա բուն պատճառը իր անորինակիւն հակասութեանը—մինչեւ որ յուլիսի մէջ երկուսով մը իրեն ինքզինու համարձակութիւնը կուրենու որպէս զի իր քանիցս յետաձգած խստումը կատարէ, այն է՝ վճարէ իր պարտքը որը մասամբ կազմուած էր Լոզանի հայ ուսանողութեան մարտ Ծին տուած երեկոյթի իրեն ալ յանձնուած ու ծախած ստմաններու գրամին մինչեւ հիմա անվճար մնալէն : Ու փոխանակ իր ասարական պարտքը կատարելու, գրիչը ձեռքը կառնէ ազգութեան շահերը պաշտպանելու համար : Ուրիշը կը կարծէ որ թիրթի փոխելով կրնայ իր շարժիկն ու գիմակն ալ փոխել ու սեւ ըսածին ճիմակ եւ ճերմակին սեւ ըսել : Ի՞նչ ողորմելի գաղափար ունենալ է հայ մամուլին եւ հայ հասարակութեան վրայ :

Բնական է որ ինձ թոյլ չի տամ ինքն իր երեսին ստախոս մակդիրը շարտող անձնաւորութեան մը յառաջ ընթաց կէտերը ներքեղու չափ ցածնալու : Եթէ երբէք Լոզանի հայ ուսանողական մարմինը, որուն աջակցած եմ միայն երեկոյթի գործը յաջողցնելու համար իբրեւ ոչ-ուսանող հայ, եւ որ ինձմէ ստանթի մը իսկ ուղած չէ, իր անգումներու ստորագրութեան տակ մէջտեղ հանէ գտնուք, այն ատեն միայն պիտի պատասխանեմ, ի հարկին պատուոյ ատուանի մը առջեւ :

Ճշմարտութիւնը ոչինչ չի կորսնցնել շարտիտ եւ ստախոգ գրութիւններով : Դպրոց մը գրպան գրութիւն խաղալիք մը չէ, ոչ ալ հայ հասարակութիւնը ոչխարներու հոտ մը : Ուսք չէ որ խոտացած ենք այլ գործ, ու քիչ ատենէն նոյնիսկ անուշտալու տրամադիր են, պիտի տեսնեն շոշափելի արդիւնքը : Ու գարձեալ հասարակութիւնը պիտի դատէ :

Մեր աշակերտներու մեծ մասը եկած է իրենց ծնողներու հետ, ուրոնք իրենց աչքով տեսնելէ եւ անձամբ գործին տեղեակ ըլլալէ վերջ

յանձնած են մեզ իրենց դաւակները : Ահա ծնողք մը որ Պարսից ծոցէն կուգայ, մտադիր միայն իր մէկ գաւակը դպրոց գնելու, բայց տանելով տեղաւոյն վրայ մեր ձեռնարկի իրական առաւելութիւնները իր երկու գաւակները միտին մեզ կը յանձնէ : Ճիշտ երկէ կը որ թէկոսնէն հանրաձայն ծնողք մը, որ իր որդին Յիւրիս կամ Լայրցից գնելու մտադրութեամբ Եւրոպա եկած էր, միմիայն գարոցը տեսնելու համար Լոզան կուգար ու ամէն ինչ մտէն քննել վերջ մեզ կը յանձնէր իր գաւակը ու կը մեկնէր ըսելով. «Ամենայն վստահութեամբ է որ երեք տարուան համար գաւակս ձեզ կը յանձնեմ. գալ տարի կը վերադառնամ սուրիշ մէկ գաւակովս միասին : Կատարեալ եւ ստոյգ իրողութիւններ են ասոնք : Եւ ի հարկին պատրաստ եմ նամակով տալու անունները այն ծնողներու եւ այցելուներուն, որոնց թիւը միշտ մեծնալու վրայ է, որոնք աչքով տեսած ու ամէն բանի մասէն տեղեկացած են, Անոնք գոնէ ամենայն վստահութեան ալ արժանի ըլլալու տուած երկու թիւնը ունին : Դեռ ճիշտ երկու շարտիտ առաջ Բարիգի Արթ. հովիւր տէր վոստապուէ Գիպարեան, Լոզանէ անցած ատեն, իր այցելութեամբ մեզ կը պատուէր ու շուրջ տասն կորնէր Հայկազեան վարժարանը աշակերտներու ներկայութեանը :


Եւ եթէ պատահի, որ ծնողք մը շրացած մեր ալա ամերիկեան թիւլամներէն կամ աւելի Ա. Տէր Զաքարեանի մը «Հայաթերթ»-ին մէջ գրած յօդուածէն (կախաւորած), գայ իր գաւակին հետ ու յայտարարէ մէջ ըսուածէն մազի չափ տարբեր գտնէ իրականութիւնը, հրապարակաւ կը յայտարարեմ որ վարժարանս պատրաստ է անոնց երթեկի ծախքը վճարելու :

Սարեւալիս օրերը միշտ համբուած են :

Մ. Նալբանդեան

Հայկազեան վարժարան
Լոզան, 15 օգոստ. 1904

ԻՆՉ Է ԿԱՍՏԱՐԱԿՈՒՄ ՍԱԼԱՍՏՈՒՄ



(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Մ... գիւղում անցեալ յունիս ամսի 18ին հարսանիքի ժամանակ լաւ զինուած մի Հ... պարոն այն գիւղի ներկայացուցիչ (պէտք է գիտնալ, որ հնչներ իւրաքանչիւր գիւղում մի մարդ գրիչ են որպէս պահապան) գնում է հարսանիքի քօրոքը ծնած, բեխերը սրած, զգուտ, գարթուած իրան նախարան ընտրած զինաք ե՛ն Հնչակի հմա խօսքերով շրջում է կանանց շրջանում եւ մի տեղացի իրաւացի նկատողութեանը մեր հերոսը պատասխանում է հրացանի հարեւածով, բարեբաղդաբար գնդակը վրիպում է : Անցնինք երրորդին՝ Գաշնակցութիւնը վերջերս Սալմաստում ընդհատուր հանգանակութեան է սկսում, հնչակեանները եւ արմենականները միացած առիթից օգուտ քաղելու եւ մասամբ էլ Գաշնակցու-

Թեան գործը խանգարելու, ծը-
րագրում են միացած հանգանա-
կույթի անել և որ սկսում են,
ի հարկէ ոչինչ չեն շահում, բայց
հետաքրքրականը այն է, թէ
ինչ է լինում գոնէ հաւաքած
գրամը: Ահա թէ ինչ—խեղճ ժո-
ղովրդից հաւաքած կուպկները
յանձնում են ուսուցիչ՝ պ. Ա. Չ.
եանին, որ այդ ժամանակ հնչ-
Սայմաստի ներկայացուցիչն է ե-
զել. իսկ վերջինս, որ առանց
այդ էլ ամօթի նշոյլ չզգալով
թույլ էր տեսել իրան ամուսնանալ
12 տարեկան իր աշակերտուհիի
հետ. և փառաւորապէս ծախում
է, հարսանիք է անում և հաւա-
քած փողերը գնում են իգոսին
առնաւուտի:

Ահա յարգելի ընթերցող, տեղ-
ւոյս հնչակեաններէ գործունէ-
ութիւնը. երեւոյթը ինքնբոս-
ինքեան տխուր է: Երկրից եկած
տեղեկութիւնները վերջին աւ-
տիճանի յուսահատական և վհա-
տեցուցիչ են և՛ այսպիսի կրի-
տիքական մօմէնտում, փոխանակ
աշխատելու չը վերգովել ժո-
ղովրդի հանգիստը, փոխա-
նակ շխանգարելու այս ժողո-
վրդի գործունէութեան եռանդը,
որ անպայման մեծ ծառայութիւն
է մատուցել յեղափոխութեան և
դեռ մատուցանում է, գալիս են
յիշեալներէ պէս անձնաւորու-
թիւնները խժգժութիւններ են
առաջ բերում և ժողովրդի ե-
ռանդը ու ոգեւորութիւնը իրանց
քմահանգըներին են ծառայեց-
նում: Ի՞նչի կարելի է վերագո-
րել այդ վարմունքը, գրա մէջ
ես ոչ մի սօսիալ, դեմօկրատական
գաղափար չեմ տեսնում, հետե-
ւաբար՝ լուռ եմ, թողնելով նը-
րանց պատասխանը հէնց իրան
ժողովրդին, որ արդէն գիտակ-
ցութեան որոշ աստիճանին հաս-
նելով և լուրջ կերպով քննադա-
տելով կազմակերպութեանց գոր-
ծունէութիւնները, ինքնաբերա-
բար տրամաբանել է հետեւեալ
առածը, որ այժմ մեծ ժողովո-
ղականութիւն է վայելում. «Մե-
ռած Արմենիա, զարաչի հնչակ,
ոսկեղօծ Դաշնակ»:

Սալուստ 14 Յուլիս 1904

ԿՈՒԻՒ ՊՈՐԴ-ԱՐԹՈՒՐԻ ՇՈՒՐՁԸ

Ամսիս 17/4ին կարճ գաղարէ
մը յետոյ Պորդ-Արթուրի շուրջը
կուր նորէն վերսկսաւ: Ինչպէս
Ձիֆու հասած փախստականները
կը հաղորդեն, ճարտարացի սոս-
կալի կորուստներ ունեցան, բայց
և այնպէս առաջացան. 20,000
հոգու կորուստը անշուշտ սխալ է
և այդ կարծիքը կազմուած է
սարսափի ազդեցութեան տակ:
Ճարտարացիներու գլխաւոր յար-
ձակումն ուղղուեցաւ ուսանելուն

ձախ թեւին վրայ, և որ վերջա-
ցաւ Աղաւնիի ծոցի դիրքերու
գրաւումով: Միեւնոյն ժամանակ
բազմաթիւ ամբողջիւններ Լիւս-
տիչան բլուրի վրայ և Պալուկ-
չանկի մօտ, որտեղ ուսանելու ալ
թեւն էր՝ վերցուեցաւ: Այս Լի-
ւստիչան բլուրը չը պէտք է շփո-
թել Պորդ-Արթուրի հարաւա-
րեւելեան կողմը գտնուող համա-
նուն նախալեռան հետ: Ճարտ-
ցիք արագութեամբ թնդանօթ-
ներ բերին նոր գրաւում գիր-
քերու վրայ և որքան որ հնարա-
ւոր էր, դասուորացիին զաննք
ամենայն փութով: Այս թնդա-
նօթները օգնեցին բանակի ու-
րիշ յարձակումներուն ուսանելու
ալ թեւին վրայ: Այստեղ ճարտ-
նացիք երկու ներքին ամբո-
լիւններ ոչ այնքան նշանաւոր
տիրեցին, և որոնց վրայ տեղա-
ւորեցին 8 միջակ, 2 պաշարման
ծանր և 6 արագածիք թնդանօթ-
ներ: Աղաւնու ծոցէն դէպի հա-
րաւ ճարտարացի մասսայով կանգ
նած են: Իրենց գլխաւոր կորուս-
ւոր ունեցան մէկ անկանոն յար-
ձակման պահին, որ սկսուեցաւ
Լուրիզա ծոցէն և տարածուեցաւ
Աղաւնու ծոցի և Լիւստիչան թե-
րակղզու ամբողջութիւններու վրայ:

Անձնատուր ըլլալու առաջարկը
Ստէօսել հրամանատարին այս ամ-
սի 15ի գիշերը շրկուեցաւ, երբ
թնդանօթաձգութիւնը վայրկեան
մը դադարեցաւ: Կը հաստատուի
թէ՛ առաջարկուեցաւ ուսական
զօրագունտին իրենց զէնքերով
ու թռուցիկ դրօշակներով կու-
րպատկիւնի գլխաւոր բանակա-
տեղին երթալ, մինչդեռ բոլոր
ոչ-վիճուորականները պէտք է տեղ
մը բերուէին, ո՛ւր որ ճարտա-
կան ծովակալը ցոյց տար: Ասոր
փոխարէն նաւահանգստի մէջ է-
զած ուսական նաւերը՝ «Ռէտի-
զան», «Պեպաստոպոլ», «Պօրեհե-
տո», «Պերեզվեէտ», «Պօլտա-
վա», «Պետան», «Պալլատան» ա-
ստնցմէ զատ չորս թնդանօթամա-
կայկները և տասներկու կամ ա-
ւելի կործանիչներ պէտք է ճա-
րտարացիներուն յանձնուէին: Ան-
տարակոյս ճարտարացիք իրենց
նաւատորմիցը այդքան նաւերով
ու ժեղացնելը հաւասարակշիռ կը
համարէին Կուրպատկիւնի զօրա-
բանակի ուժեղնալու Պորտ Ար-
թուրի զօրագնդով: Սակայն երբ
Ստէօսելը այդ հրաւերը ստացաւ
սկսաւ սոսկալի հայհոյել: Վայրկե-
ան մը ասիկա կորսնցուց իր
սովորական անվրդով հանգստու-
թիւնը: Մայրախոյ յուզուած ըս-
կաւ սենեակի մէջ երթեւեկել,
մինչեւ որ կրցաւ նորէն ինքզին-
քը տիրապետել: Յետոյ պատաս-
խանեց չոր տոնով — «Ճարտա-
կան այս նամակը յիրաւի անճա-
շակ կատակ մըն է—: Ճարտա-
կան մաժօրի հետ Ստէօսիլը ան-

ձամբ շատ քաղաքավարի վար-
ուեցաւ, սակայն պատասխանը
կտրուկ և բնորոշ եղաւ: Նոյն-
իսկ մեռելները թաղելու համար
ճարտական մաժօրի խնդրած ե-
րեք օրուան զինադադարը մեր-
ժուեցաւ: Եւ այս պատճառով կը
սիր այս ամսի 17ին, ժամը ա-
ռաօտեան 10ին նորէն սկսաւ,
և երբ վերջին մակոյկները Պորտ
Արթուրը կը թողնէին՝ Ռուր
արդէն տրածուներ էր ամէն կողմ:
Ռուս փախստականները անպայ-
մանօրէն կը հաւատն թէ՛ Պորդ
Արթուրը պիտի դիմանայ: Ան-
տարակոյս անոնք զօրաբանակէ
մը կուգան, որ բոլոր լրջու-
թեամբ կը հաւատն թէ՛ Կուր-
պատկիւնը 14 օրուան մէջ իրենց
օգնութեան պիտի հասնի:

Գրաւում ներքին ամբոլիւն
ներն են թիւ 3 և 4: Այս ամբո-
լիւններէն ուրեքը կը պայթին
Պորդ Արթուրի մէջ. մեծ մասամբ
հին քաղաքամասի մէջ. կէտե-
րէն մէկը, մինչեւ ուր ճարտա-
ցիք կարողարած են առաջանալ,
այլեւս անգործածելէ դարձած
չինական ազգամթերանոցն է,
որ մէկ ու քառորդ մղոն հեռու է
քաղաքէն: Կաւաճող սոս-
տիկ զննատու է: Քաղաքին մէջ
ճարտական ուսմբերու սարափ-
ները շարունակ հրդեհներ առաջ
կը բերեն, և Ձիֆուէն պարզ կե-
րեւայ Պորդ Արթուրի երկիւնքը,
որ ծուխով ու բոցերով է խեղ-
գուած:

Ն. Յ. Պ.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՁ

Հակառակ նոսրօտէ վրէժիայի՞
այն բիրաւոր փայլուն խոստում-
ներուն և յոյսերուն, որոնց մաս-
նակից էր շերմապէս նսնւ ուս-
ական զինուորական սպայակոյ-
տը, հակառակ այն յոյսերուն,
ըսինք, որոնք երկին սատղերէն
ու ծովի աւազներէն աւելի շատ
են, ուսական ազգամթերութիւ-
նը սակայն մէկը միւսի ետեւէն
ստանալով ճարտական ապտակ-
ները չը կրցաւ այս վեց երկար
ամիսներու ընթացքին գոնէ մէկ
հատիկ ընդհարումի մը մէջ գե-
րիշխել ճարտական խելքն ու
տակտիկան:

Ռուսական անպէտք ազգամգի-
տութիւնը այն աստիճանի խոչոր
ու կոպիտ սխալներ գործեց, որ
նախ եւրոպայի զարմանքը և յե-
տոյ ծաղրը հրախիւց իր խելքի
վերան, որ այլեւս պատերազմի
չնորհիւ քողաղուրկ էր դարձած:
Այդ ծաղրը մինչեւ այստեղ հա-
սաւ, որ Ն. Յ. Պ. էր պէս չափա-
ւոր թերթ մը, որ ոչ մէկի կող-
մը չը բռնէր, երկար ու անհամ-
բեր սպասելով Կուրպատկիւնի
մասին, և անոր իսկ բերանէն
յայտնուած ազգամգիտական յաղ-

թական ծրագիրներու եթէ ոչ ի-
րականացումին, գոնէ կիրար-
կումին, վերջապէս ստիպուած
եղաւ ըսել թէ՛ — ուսական բա-
նակը ո՛չ թէ կը զննվարուի,
այլ ոկը քշուի—: Եւ ապէս աւե-
լի ծանր մեղադրանք չէր կրնար
ըլլալ Կուրպատկիւնի հասցէն
մասնաւորապէս, և ուսական
ազգամգիտութեան՝ ընդհանրա-
պէս: Բայց ուսական ազգամգի-
տութիւնը յանձին իր ազգամգէտ-
ներու յուսահատուելու երեւոյթը
չունի: Հակառակ ուսական բա-
նակի իր սպայակոյտով ու Կուր-
պատկիւնով առանց վհատութեան
քշուելուն՝ գէպի Մուկէն,
ուսական ազգամգիտութիւնը
պատմական սեւ ագռաւին պէս
բոյնբը կուզէ փոխել ոճերմակ
ձագուկներ՝ հանելու համար,
Կուրպատկիւնի շերմի մէջ ծրա-
գրած այն նշանաւոր ոչնդկաւս-
տանը գրաւելու՝ առաջարկէն յե-
տոյ, թերթերու մէջ շարունակ
կը կարգանք ուրիշ նոր բոյնբու-
րնտրութեան որոշումներու մա-
սին: Օրինակ ուսական ազգա-
գիտութիւնը կուզէ կուր տեղա-
փոխել Գորէա, յետոյ նոյնպէս
Վլատիվաստը, յետոյ ցոյցերը
նել Աֆղանիստանի սահմաններու
վրայ եւն. եւն... Մի՛շտ միեւնոյն
է, միշտ նոյն սեւ ագռաւը, որ
ոճերմակ ձագուկներ՝ կուզէ հա-
նել: Սակայն հակառակ գերա-
նական արծուի օգնութեանը, սե-
ւագաւը չը պիտի յաջողի սե-
մակ ձագուկներ՝ հանել:

Լիւստեանկի մէջ ոպատուած
վճռական ճակատամարտը չի եւ
չը պայթեց, պատճառը մէկ կող-
մէ անձրեւներն են անշուշտ, և
միւս կողմէ ճարտական ազգա-
գիտական ծրագիրները: Վեր-
ջին հեռագիրները կը տեղեկաց-
նեն թէ՛ Քուրդքէի բանակի մէկ
մասը արդէն կը գտնուի Մուկ-
աէնի և Լիւստեանկի մէջտեղ և
պաշարի է ուս գունտ մը: Ե-
թէ այս ճիշտ է, ուրեմն Կուր-
պատկիւնին անխուսափելիօրէն
աղէտ մը կը սպասուայ: Նոյնպէս
վերջին հեռագիրներէն կիմա-
նանք, որ ուսական նովիկ մար-
տանաւը յաջողի է Կամիմուրան
խորտակել Սախալինի մօտերը:

ՀԱՅԿԱԶԵՍԸ ԳԻՇԵՐՈՒԹԻՎ ԿԻՐԱՐԱՆ

Կրթարանս իր Ձրդ. Տարեշրջանը
կը կատարուի յառաջիկայ Սեպտեմբեր 2-ին՝
հինգշաբթի օր: Այս տարի տասը գե-
չերթիկներու համար միայն տեղ ու-
նինք: Պայմաններու մասին հանեցե՛ք
դիմել Տնօրէնին:

Հայկ Ե. Եւրոպայում
Ֆիլիպի

Отговорникъ
Мурадъ Франосянъ
Печатница „Въединность“ Варна